

**ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի ուղերձը առաջին
Հանրապետության օրվա հռչակման կապակցությամբ**

Սիրելի հայրենակիցներ

101 տարի առաջ այս օրերին հայ ժողովուրդը Սարգարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի հերոսամարտերում ոչ միայն նվաճեց ապրելու իր իրավունքը, այլ նաեւ դրեց հայրենի պետականության հիմքերը, որոնց վրա էլ վեր բարձրացան Հայաստանի Խորհրդային ու Երրորդ Հանրապետությունները եւ Արցախի Հանրապետությունը: Այդ հերոսական օրերի շնորհիվ հայ ժողովուրդը նվաճեց իր ճակատագիրը տնօրինելու իրավունքը, իր հայրենիքի քաղաքացիությունն ընդունելու իրավունքը: Խոնարհվելով մեր պապերի սխրանքի առաջ՝ այսօր մենք մեզ ենք վերապահել մեր պատմական հաղթանակների, ձեռք բերած աժեքների պահպանումն ու զարգացումը, Նոր Հայաստանի կերտումը, համազգային բարօրության հաստատումը:

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության հռչակման տոնի կապակցությամբ, ցանկանում միշտ խաղաղ ու հզոր հայրենիք:

Ջերմ բարեմաղթանքներով՝

Գեղարքունիքի մարզպետ

Գնել Սանոսյան